Հավելված 1
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2023 թվականի
նոյեմբերի 16-ի ԿԽ-013/23/4 որոշման

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է դատական կարգադրիչների 2024 թվականի վերապատրաստման և հատուկ ուսուցման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:
2. Ծրագիրը մշակվել է «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի, Բարձրագույն դատական խորհրդի 09.10.2023 թ. ԲԴԽ N 1 որոշման պահանջներին համապատասխան:
3. Ծրագիրը նպատակաուղղված է դատական կարգադրիչների ծառայությանը վերաբերող իրավական հիմքերի, առաջին բժշկական և հոգեբանական օգնության, ֆիզիկական ուժի և հատուկ միջոցների կիրառման, հրազենի կիրառման իրավական հիմքերի, կառավարման հմտությունների, իրավաբանական գրագրության և փաստաթղթերի վարման կանոնների վերաբերյալ գիտելիքների և հմտությունների կատարելագործմանը:
4. Յուրաքանչյուր խմբի վերապատրաստումն ու հատուկ ուսուցումն ավարտվում է վերապատրաստման արդյունքների գնահատմամբ: Գնահատումն իրականացվում է տվյալ խմբի դասընթացներին հաջորդող առաջին օրը:
5. Վերապատրաստման և հատուկ ուսուցման ժամանակացույց է սահմանվում 2024 թվականի մայիս-օգոստոս ամիսները:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

1. Դատական կարգադրիչների ծառայության բաժինների և բաժանմունքների պետերի վերապատրաստման դասընթացների մոդուլ

N	Դասիչը	Անվանումը	Ժ/ք
1.	JB-G-001-24	Դատական կարգադրիչների ծառայությանը վերաբերող իրավական հիմքերը	8
2.	JB-G-002-24	Առաջին բժշկական և հոգեբանական օգնություն	10
3.	JB-S-003-24	Ֆիզիկական ուժի և հատուկ միջոցների կիրառում, հրազենի կիրառման իրավական հիմքեր	6
4.	JB-G-004-24	Կառավարման հմտություններ	2
5.	JB-G-005-24	Իրավաբանական գրագրություն և փաստաթղթերի վարման կանոններ	4

2. Դատական կարգադրիչների վերապատրաստման դասընթացների մոդուլ

N	Դասիչը	Անվանումը	Ժ/ք
1.	JB-G-001-24	Դատական կարգադրիչների ծառայությանը վերաբերող իրավական հիմքերը	12
2.	JB-G-002-24	Առաջին բժշկական և հոգեբանական օգնություն	10
3.	JB-S-003-24	Ֆիզիկական ուժի և հատուկ միջոցների կիրառում, հրազենի կիրառման իրավական հիմքերը	8

III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1.ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԵՎ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՆ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. JB-G-001-24. Դատական կարգադրիչների ծառայությանը վերաբերող իրավական հիմքերը

Դասընթացն անհրաժեշտ է դատական կարգադրիչների ծառայության բաժինների և բաժանմունքների պետերի կողմից պատշաճ վարքագծի դրսևորումն ապահովելու համար:

Դասընթացը ներառում է դատական կարգադրիչների ծառայության բաժինների և բաժանմունքների պետերի ծառայողական վարքագծի կանոնները, էթիկայի ծագման և սահմանման հիմնահարցերը, քաղաքացիների հետ նրանց շփումների վարքաբանության հիմունքները, դատական կարգադրիչների ծառայությանը վերաբերող իրավական ակտերը և այլ հարցեր:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ դատական կարգադրիչների ծառայության բաժինների և բաժանմունքների պետերի համար՝ JB-G-002-24, JB-G-004-24, JB-G-005-24 դասընթացների հետ միասնական քննությամբ:

2. JB-G-002-24. Առաջին բժշկական և հոգեբանական օգնություն

Դասընթացն անհրաժեշտ է դատական մարմինների հետ շփվող քաղաքացիների հոգեբանական և առողջական ռիսկերը նվազեցնելու համար՝ դատական կարգադրիչների ծառայության բաժինների և բաժանմունքների պետերին օգնելով առավել արդյունավետ իրականացնել պաշտոնեական գործառույթները: Դասընթացը պայմանավորված է նաև դատական կարգադրիչների՝ դատարաններում արտակարգ կամ ճգնաժամային իրավիճակ առաջանալու դեպքում ձեռնարկվող անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ գործնական հմտությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է անհատական և խմբային գործընթացների հոգեբանական բնութագրումը, սթրեսի հիմքերը և տեսակները, դրա կառավարման մեթոդները, առաջին բուժօգնության հիմունքները, միջոցների և մեթոդների բնութագիրը:

Դասընթացը ներառում է նաև միջանձնային հարաբերությունների հոգեբանական ասպեկտները, ինքնակառավարման վերահսկողության առանձնահատկությունները և ներազդման հոգեբանությունը:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ դատական կարգադրիչների ծառայության բաժինների և բաժանմունքների պետերի համար՝ JB-G-001-24, JB-G-004-24, JB-G-005-24 դասընթացների հետ միասնական քննությամբ:

3. JB-S-003-24. Ֆիզիկական ուժի և հատուկ միջոցների կիրառում, հրազենիկիրառման իրավական հիմքերը

Դասընթացն անհրաժեշտ է դատական կարգադրիչների ծառայության բաժինների և բաժանմունքների պետերի մոտ հատուկ միջոցների գործադրման հմտությունների, ֆիզիկական ուժի և հրազենի կիրառման անհրաժեշտության և պայմանների վերաբերյալ գիտելիքների ձեռքբերման, ինչպես նաև նրանց շարային պատրաստվածության ապահովման համար:

Գնահատումն իրականացվում է հմտությունների գործնական ստուգման եղանակով:

4. JB-G-004-24. Կառավարման հմտություններ

Դասընթացն անհրաժեշտ է դատական կարգադրիչների ծառայության բաժինների և բաժանմունքների պետերի մոտ կառավարման հմտություններ (այդ թվում՝ դատարաններում արտակարգ իրավիճակներ առաջանալու դեպքում) զարգացնելու համար:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ JB-G-001-24, JB-G002-24, JB-G-005-24 դասընթացների հետ միասնական քննությամբ:

5. JB-G-005-24. Իրավաբանական գրագրություն և փաստաթղթերի վարման կանոններ

Դասընթացն անհրաժեշտ է դատական կարգադրիչների ծառայության բաժինների և բաժանմունքների պետերի մոտ ծառայությանը վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերի կազմման և համապատասխան գրագրության վարման հմտություններ ձեռք բերելու համար:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ JB-G-001-24, JB-G-002-24, JB-G-004-24 դասընթացների հետ միասնական քննությամբ:

2. ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻՆ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. JB-G-001-24. Դատական կարգադրիչների ծառայությանը վերաբերող իրավական հիմքերը

Դասընթացն անհրաժեշտ է դատական կարգադրիչների կողմից պատշաճ վարքագծի դրսևորումն ապահովելու համար:

Դասընթացը ներառում է դատական կարգադրիչների ծառայողական վարքագծի կանոնները, էթիկայի ծագման և սահմանման հիմնահարցերը, քաղաքացիների հետ նրանց շփումների վարքաբանության հիմունքները, դատական կարգադրիչների ծառայությանը վերաբերող իրավական ակտերը և այլ հարցեր:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ JB-G-002-24 դասընթացի հետ միասնական քննությամբ:

2. JB-G-002-24. Առաջին բժշկական և հոգեբանական օգնություն

Դասընթացն անհրաժեշտ է դատական մարմինների հետ շփվող քաղաքացիների հոգեբանական և առողջական ռիսկերը նվազեցնելու համար՝ դատական կարգադրիչներին օգնելով առավել արդյունավետ իրականացնել պաշտոնեական գործառույթները: Դասընթացը պայմանավորված է նաև դատական կարգադրիչների՝ դատարաններում արտակարգ կամ ճգնաժամային իրավիճակ առաջանալու դեպքում

ձեռնարկվող անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ գործնական հմտությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է անհատական և խմբային գործընթացների հոգեբանական բնութագրումը, սթրեսի հիմքերը և տեսակները, դրա կառավարման մեթոդները, առաջին բուժօգնության հիմունքները, միջոցների և մեթոդների բնութագիրը:

Դասընթացը ներառում է նաև միջանձնային հարաբերությունների հոգեբանական ասպեկտները, ինքնակառավարման վերահսկողության առանձնահատկությունները և ներազդման հոգեբանությունը:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ JB-G-001-24 դասընթացի հետ միասնական քննությամբ:

3. JB-S-003-24. Ֆիզիկական ուժի և հատուկ միջոցների կիրառում, հրազենի կիրառման իրավական հիմքերը

Դասընթացն անհրաժեշտ է դատական կարգադրիչների մոտ հատուկ միջոցների գործադրման հմտությունների, ֆիզիկական ուժի և հրազենի կիրառման անհրաժեշտության և պայմանների վերաբերյալ գիտելիքների ձեռքբերման, ինչպես նաև նրանց շարային պատրաստվածության ապահովման համար:

Գնահատումն իրականացվում է հմտությունների գործնական ստուգման եղանակով: